

կամ « վանք պատմուճակացն¹ » (Փաւս. 205): Ասոր հակառակ էր պարսկական սովորոյթը, որով Սասանեան արքայք թագ ի գլուխ կը ճաշէին, եւ որոց կը համակերպին մեր թագաւորք ալ՝ երբ անոնց սեղանին վրայ են (նոյն, 134), մինչդեռ Յոյներն ու Հռովմայեցիք իրենց քանդակաց մէջ բացազլուխ են սովորաբար (Գար. Ա, 1274-9), եւ ետրուրական ճաշանկար մը ցոյց կու տայ կոչնականաց գլխին ժպաւինածեւ վարսակալն ալ՝ նման Հայոց (անդ, 1274):

Հայք կը հանէին նաեւ սամոյրը կամ ուրիշ մուշտակներ՝ որոնք թագաւորին եւ իշխանաց արտաքին թիկնոցի տեղ էին (նոյն, 118, 263), եւ զոր տեսանք նաեւ վասակայ վրայ (աստ, 151): Այսպէս Պապայ խնճոյից մէջ Դղակ մարդպետն հագած էր վարտիս, եւ անոր վրայ պատմուճանը՝ զսպուած գօտռով, եւ ոտներուն մոյկեր. իսկ մուշտակ չունի (Փաւս. 204): Մեծն Ներսէս ալ արքունի սենեկապետութեան պաշտօնին մէջ կը նկարագրուի պատմուճանով միայն՝ իբր արտաքին ըզգեստ (նոյն, 69): — Բայց կոչնականք

1. Այդ բարը, ծագած հայ և պահլ. պատմուճանէն (Հիւրշ. 224), է Դ թագ. ԻԲ, 14 գործածուած է փոխան յն. ἱματιοφύλαξι, որ է հանդերձապետ: